**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/3274-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-815-22.12.2020-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 59 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Պ-815-22.12.2020-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա: Նկատի ունենալով, որ Օրենքով կարգավորվող հարաբերությունների շրջանակն ամրագրված է նշված հոդվածի 1-ին մասում, իսկ նույն հոդվածի 6-րդ մասը վերաբերում է այն հարաբերություններին, որոնց վրա Օրենքի գործողությունը չի տարածվում, առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել Օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը, իսկ Նախագծով առաջարկվող կարգավորումը նախատեսել նույն հոդվածի 1-ին մասում:

2. Նախագծով նախատեսվում է Օրենքը լրացնել էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունները կանոնակարգող նոր բաժնով, մինչդեռ դրանում նախատեսվող կարգավորումները, մասնավորապես՝ 35.8-35.11-րդ հոդվածները վերաբերում են միայն էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող աճուրդներին, մինչդեռ սակարկությունների ձև հանդիսացող մրցույթների վերաբերյալ կարգավորումներ Նախագծով նախատեսված չեն:

3. Նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող Օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասում առաջարկում ենք բացառություն նախատեսել Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների վերաբերյալ, քանի որ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող որոշ գործառնություններ, մասնավորապես՝ ռեպո-աճուրդները, ավանդային սակարկությունները, Կենտրոնական բանկի կողմից թողարկվող կարճաժամկետ պարտատոմսերի՝ աճուրդների միջոցով տեղաբաշխումն իրականացվում են էլեկտրոնային համակարգերի միջոցով և կառավարվում են Կենտրոնական բանկի կողմից:

4. Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների պարագայում վարձատրություն *և/կամ դրա մասով նվազեցում չի նախատեսվում*: Կարծում ենք՝ նշված հոդվածը հստակեցման կարիք ունի, քանի որ անհասկանալի է, թե ինչ է ենթադրում «և/կամ դրա մասով նվազեցում» ձևակերպումը: Եթե խոսքը այն մասին է, որ աճուրդի կազմակերպման համար կազմակերպիչը վարձատրություն չի ստանում, պետք է հստակ սահմանել այդ մասին:

5. Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսվում է Օրենքի 4-րդ գլուխը լրացնել բաժիններով: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Նորմատիվ իրավական

ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում: Գլուխները կարող են միավորվել բաժիններում, իսկ բաժինները՝ մասերում: Հետևաբար, Նախագծով լրացվող դրույթների համարակալումն անհրաժեշտ է վերանայել:

6. Նախագծով լրացվող 35.6-րդ հոդվածով էլեկտրոնային համակարգերը բնորոշվում են որպես սակարկությունների կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումներ, ինտերնետային հասցե, տեխնիկական լուծումներ և *բոլոր այն համակարգերն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման և իրականացման համար:* Կարծում ենք՝ նշված կարգավորումն իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից խնդրահարույց է, քանի որ այն չի նախատեսում էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգերի սպառիչ բնորոշում:

Բացի այդ, Նախագծի տարբեր հոդվածներում օգտագործվում են «կայք», «ինտերնետային էջ» բառերը, սակայն հասկանալի չէ, թե ինչ կայքի կամ ինտերնետային էջի մասին է խոսքը: Արդյո՞ք ցանկացած կազմակերպություն կարողանալու է իր ինտերնետային էջում կազմակերպել և անցկացնել հրապարակային սակարկություն, եթե այո, ապա կարծում ենք՝ անհրաժեշտ է նախատեսել նվազագույն պահանջներ, որոնց պետք է համապատասխանի կազմակերպչի ինտերնետային էջը: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթները, նշված հոդվածի մասն անհրաժեշտ է համարակալել:

7. Նախագծով լրացվող 35.7-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչ կարող են լինել այն կազմակերպությունները, որոնք կապահովեն Օրենքով էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին ներկայացվող պահանջները: Կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձինք են, դրանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ սակարկությունների կազմակերպչի օրենսդրական բնորոշմանը: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից: Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *հրապարակային սակարկությունների կազմակերպիչը կամ կազմակերպիչը* աճուրդ (մրցույթ) անցկացնող գույքի սեփականատեր, գույքային

իրավունքների տիրապետող, ինչպես նաև պայմանագրով կամ օրենքով հրապարակային սակարկություններ կազմակերպելու լիազորություններով օժտված անձը կամ մարմինն է:

Վերոգրյալի համատեքստում նախ անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկության կազմակերպիչ կարող է հանդիսանալ միայն իրավաբանական անձը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծով կազմակերպչի համար սահմանված պահաջները չեն ենթադրում որևէ առանձնահատկություն կամ գործառույթ, որը չի կարող իրականացվել նաև այլ անձանց կողմից: Բացի այդ, Նախագծի և Նախագծին կից ներկայացված հիմնավորման ուսումնասիրությունից պարզ չէ, թե ինչ սկզբունքով և ում կողմից են որոշվելու այն կազմակերպությունները, որոնք կհամարվեն օրենքով էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպմանը ներկայացվող պահանջները պահպանած կամ իրավունք կունենան լինելու կազմակերպիչ:

8. Նախագծով լրացվող 35.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդն անցկացնելու օրվանից առնվազն տասն օր առաջ: Հարկ է նշել, որ Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդի բացումից առնվազն տասնհինգ օր առաջ: Ուստի, նշված կարգավորումների միջև առկա անհամապատասխանությունը վերացնելու նպատակով Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ հրապարակային ծանուցման ժամկետի համար անհրաժեշտ է նախատեսել բացառություն:

Նույն հոդվածի 1-ին մասը «սահմանված տեղեկությունները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև այլ տեղեկություններ կազմակերպչի ինտերնետային կայքին ծանոթանալու հնարավորության և այդ կայքում գույքի շահագործման պատմության ու վիճակի վերաբերող լուսանկարների, տեսաձայնագրությունների ձևով պարտադիր ներառելու մասին, եթե վաճառքի ենթակա գույքն անհնար է տեղափոխել պահառության վայր:» բառերով, ինչպես նաև քանի որ էլեկտրոնային աճուրդով իրականացվելու են նաև ընդհանուր աճուրդներ՝ անհրաժեշտ է «4-9-րդ» թվերը փոխարինել «4-10-րդ» թվերով:

Նույն հոդվածի 2-րդ մասը «կայքում» բառից հետո առաջարկում ենք լրացնել «բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց (հիփոթեքի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց (հիփոթեքի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ինտերնետային կայքում:» բառերով:

9. Նախագծի ամբողջ տեքստում «աճուրդի կանոններ» բառերն առաջարկում ենք փոխարինել «աճուրդի կանոնակարգ» բառերով:

10. Նախագծով լրացվող 35.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը պետք է ունենա ինտերնետային էջ և ՀՀ-ում գրանցված բանկային հաշիվ, որի միջոցով աճուրդին մասնակցել ցանկացող անձինք պետք է հնարավորություն ունենան գրանցվելու և մասնակցելու աճուրդին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աճուրդի համար գրանցվելու և դրան մասնակցելու հնարավորություն ապահովելու վերաբերյալ պահանջը վերաբերում է ինտերնետային էջին՝ «...և ՀՀ-ում գրանցված բանկային հաշիվ, որի միջոցով..» ձևակերպումն առաջարկում ենք վերանայել: Հոդվածի նույն մասում «ՀՀ-ում գրանցված» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկում բացված» բառերով:

11. Նախագծով լրացվող 35.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աճուրդին մասնակցել ցանկացող անձը գրանցվում է կայքում՝ նշելով և կցելով անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշը (իրավաբանական անձի դեպքում գրանցման վկայական և ՀՎՀՀ, բանկային հաշիվ), եթե այլ բան նախատեսված չէ աճուրդի կանոններով, որից հետո ծրագիրը նրան տալիս է նույնականացնող համարանիշ, ինչից հետո մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցելու աճուրդին: Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է նախատեսել համակարգում գրանցման ժամանակ մասնակիցների նույնականացման մեխանիզմ, քանի որ վերջինս էական ազդեցություն ունի աճուրդի կազմակերպման արժանահավատության վրա: Բացի այդ, անհասկանալի է իրավաբանական անձի կողմից բանկային հաշվի վերաբերյալ նշում կատարելու նպատակը՝ հաշվի առնելով նաև այն, որ ֆիզիկական անձի դեպքում նման պահանջ նախատեսված չէ:

12. Նախագծով լրացվող 35.10-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Աճուրդում հաղթող մասնակիցն արձանագրությունը ստորագրելուց հետո պարտավոր է երեք աշխատանաքային օրվա ընթացքում փոխանցել գնված լոտի գինն ամբողջությամբ, հաշվանցելով նախավճարը:», քանի որ նախավճարի վճարումը սույն օրենքի համաձայն պարտադիր պայման է.

2) 6-րդ մասի համաձայն՝ լոտի գնի վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով, որը կարող է իրականացվել նաև բանկային հաշվի և/կամ քարտի միջոցով..: Այս առումով պարզ չէ և հստակեցման կարիք ունի, թե բանկային հաշվի և/կամ քարտից բացի ինչ ձևով կարող է իրականացվել լոտի գնի՝ անկանխիկ եղանակով վճարումը:

3) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ աճուրդի անցկացման օրը ստորագրում է աճուրդի արձանագրություն, որի ձևը և ստորագրության կարգը սահմանվում են աճուրդի կանոնակարգով։».

4) 8-րդ մասում «հինգօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով, իսկ «և գույքի հանձնման-ընդունման ակտ» բառերը հանել.

5) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Աճուրդի կազմակերպիչն աճուրդում հաղթած մասնակցի հետ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրականացնում է գույքի հանձնում, տեղեկացնելով սահմանված ժամկետում իրավունքների գրանցման մասին, եթե դրանք պահանջվում են։».

6) փոխել սույն հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի հաջորդականությունը հետևյալ առաջնահերթությամբ՝ 7-րդ, 5-րդ և 6-րդ։

13. Նախագծով լրացվող 35.11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ աճուրդը համարվում է անվավեր, եթե չեն պահպանվել Օրենքի 35.5-35.10-րդ հոդվածներով սահմանված պահանջները և/կամ կազմակերպչի կողմից սահմանված աճուրդի կանոնները։

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկությունները շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր, ինչպես նաև նկատի ունենալով, որ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով՝ առաջարկում ենք Նախագծի 35.11-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել՝ նախատեսելով, որ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն շահագրգիռ անձի հայցով՝ դատական կարգով։

Բացի այդ, Նախագծի նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ, *իսկ դրա անհնարինության դեպքում կիրառվում են անվավերության հետևանքներ՝ օրենքով սահմանված կարգով։*

Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ սակարկություններ անցկացնելու կանոնները խախտելու հետևանքներն ամրագրող 465-րդ հոդվածին։ Այսպես, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սակարկություններն անվավեր ճանաչելը հանգեցնում է *սակարկություններում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության։* Այսինքն՝ սակարկության անվավերության հետևանքը դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերությունն է, որը ենթակա է կիրառման՝ անկախ նոր աճուրդ կազմակերպելու հանգամանքից։ Ուստի, Նախագծով նախատեսվող հիշատակված կարգավորումն այս համատեքստում ունի վերանայման կարիք։

Ինչպես նաև առաջարկում ենք 1-ին մասի 2-րդ կետը հանել, քանի որ այն հակասում է Օրենքի պահանջին։

14. Առաջարկում ենք նաև նախագիծը լրացնել նոր հոդվածով և Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը պետք է դադարի մրցույթի հայտերի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ (բացառությամբ հողամասերի վաճառքի, որը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասով), եթե մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:»:

Օրենքում կատարվող փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է մրցույթի և աճուրդի անցկացման միասնական մոտեցմամբ իրականացման անհրաժեշտությամբ: Ժամկետային փոփոխությունների ընդունման արդյունքում մրցույթի իրականացման գործընթացը կկազմակերպվի առավել օպտիմալ և արդյունավետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Նախագծով ներկայացված կարգավորումները կարող են ընդունելի լինել միայն մեր կողմից ներկայացված նկատառումները հաշվի առնելու դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2021 թվականի N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Վարդան Կոստանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-815-22.12.2020-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

(որոշումը փոփ. 01.02.21 N 82-Ա)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

ՆԱԽԱԳԻԾ

Պ-815-22.12.2020-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Սույն օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների եւ հարկադիր աճուրդների վրա:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Լուծարվող իրավաբանական անձի գույքի վաճառքի դեպքում վարձատրության չափը առաջարկողի եւ աճուրդի կազմակերպչի միջեւ կնքված պայմանագրով չի կարող գերազանցել վաճառվող գույքի մեկնարկային գնի տասը տոկոսը: Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների եւ հարկադիր աճուրդների պարագայում վարձատրություն եւ/կամ դրա մասով նվազեցում չի նախատեսվում:»:

Հոդված 3. Օրենքի «Գ Լ ՈՒ Խ 4» բառից եւ թվից հետո լրացնել «ԲԱԺԻՆ 1» բառը եւ թիվը:

Հոդված 4. Օրենքի 4-րդ գլուխը լրացնել նոր՝ 2-րդ բաժնով.

«ԲԱԺԻՆ 2

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 35.5. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների հասկացությունը

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններ են համարվում այն սակարկությունները, որոնք կազմակերպվում են էլեկտրոնային եղանակով եւ համապատասխանում են սույն օրենքով էլեկտրոնային սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջներին՝ բացառությամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների:

2. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 35.6. Էլեկտրոնային համակարգերի հասկացությունը

Սույն օրենքի իմաստով էլեկտրոնային համակարգեր են համարվում սակարկությունների կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, ինտերնետային հասցեն, տեխնիկական լուծումները եւ բոլոր այն համակարգերն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային սակարկությունների կազմակերպման եւ իրականացման համար:

Հոդված 35.7. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչ կարող են լինել այն կազմակերպությունները, որոնք կպահպանեն սույն օրենքով Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին ներկայացվող պահանջները:

2. Կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ եւ հիմնարկներ, օտարերկրյա կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումներ.

Հոդված 35.8. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ հրապարակային ծանուցումը

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վերաբերյալ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդն անցկացնելու օրվանից առնվազն տաս օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ եւ 4-9-րդ կետերով սահմանված տեղեկությունները:

2. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով եւ http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Հոդված 35.9. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկություններին ներկայացվող նվազագույն պահանջները

1. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների կազմակերպիչը պետք է ունենա ինտերնետային էջ եւ ՀՀ-ում գրանցված բանկային հաշիվ որի միջոցով աճուրդին մասնակցել ցանկացող անձինք պետք է հնարավորություն ունենան գրանցվելու եւ մասնակցելու աճուրդին:

2. Աճուրդին մասնակցել ցանկացող անձանց գրանցումը կատարվում է անվճար:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված ինտերնետային էջում պետք է հրապարակված լինի աճուրդի մասնակցության կանոնակարգն ու պայմանները:

4. Աճուրդին մասնակցել ցանկացող անձը մինչեւ աճուրդի նախորդ օրը ժամը 16:00-ն գրանցվում է կայքում՝ նշելով եւ կցելով անձը հաստատող փաստաթուղթ եւ հանրային ծառայությունների համարանիշը (իրավաբանական անձանց դեպքում գրանցման վկայական եւ ՀՎՀՀ, բանկային հաշիվը) եթե այլ բան նախատեսված չէ աճուրդի կանոններով, որից հետո ծրագիրը նրան տալիս է նույնականացնող համարանիշ, ինչից հետո մասնակիցը հնարավորություն է ստանում մասնակցելու աճուրդին:

5. Վաճառքի ենթակա լոտերի վերաբերյալ գնային առաջարկները եւ վճարումների կատարման եւ իրականացման գործընթացքը սահմանվում են աճուրդի կանոնակարգով:

6. Աճուրդի կազմակերպիչը երաշխավորում է աճուրդի մասնակիցների անձնական տվյալների պաշտպանությունը, դրանք չեն կարող տրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոդված 35.10. Աճուրդի ընթացքը եւ ավարտը

1. Աճուրդի մեկնարկը եւ ընթացքը սահմանվում են աճուրդի կանոններով:

2. Աճուրդի տեւողությունը եւ ավարտը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

3. Աճուրդը համարվում է ավարտված, երբ լրանում է աճուրդի տեւողությամբ սահմանված ժամկետը:

4. Աճուրդում հաղթող է ճանաչվում առավելագույն գին ներկայացրած մասնակիցը:

5. Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել գնված լոտի գինն ամբողջությամբ, իսկ նախավճար վճարված լինելու դեպքում՝ հաշվանցելով նախավճարը:

6. Լոտի գնի վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով, որը կարող է իրականացվել նաեւ բանկային հաշվի եւ/կամ քարտի միջոցով եթե աճուրդի կազմակերպման համակարգը թույլ է տալիս կցել բանկային քարտ կամ հաշիվ:

7. Աճուրդում հաղթած մասնակցի հետ ստորագրվում է արձանագրություն, որի ձեւը եւ ստորագրության կարգը սահմանվում է աճուրդի կանոնակարգով:

8. Լոտի վաճառքի ամբողջական գինը աճուրդի կազմակերպչի կողմից ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում աճուրդում հաղթած մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր եւ գույքի հանձնման-ընդունման ակտ:

9. Աճուրդի կազմակերպիչը լոտի գնման գինն ամբողջությամբ ստանալուց հետո այն երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է լոտը վաճառքի ներկայացրած անձին/ընկերությանը:

Հոդված 35.11. Աճուրդը չկայացած եւ անվավեր ճանաչելը

1. Աճուրդը համարվում է չկայացած, եթե՝

1) աճուրդին չի մասնակցել ոչ մի գնորդ.

2) աճուրդի ընթացքում լոտի մեկնարկային գնի հավելում չի կատարվել.

3) աճուրդում հաղթած անձը հրաժարվել է ստորագրել աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կամ սահմանված ժամկետում չի վճարել լոտի գնման գինը:

2. Աճուրդը պետք է չկայացած հայտարարվի ոչ ուշ, քան նշված հանգամանքների վրա հասնելու հաջորդ օրը:

3. Աճուրդը համարվում է անվավեր եթե չեն պահպանվել սույն օրենքի 35.5-35.10-րդ հոդվածներով սահմանված պահանջները եւ/կամ կազմակերպչի կողմից սահմանված աճուրդի կանոնները:

4. Աճուրդն անվավեր ճանաչվելու դեպքում կազմակերպվում է նոր աճուրդ, իսկ դրա անհնարինության դեպքում կիրառվում են անվավերության հետեւանքներ՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Սույն օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է շուկայական տնտեսության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակահատվածում գործարար շրջանառության կազմակերպման գործընթացների առավել արդյունավետ եւ ժամանակակից եղանակների ստեղծման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի օրենքի դրույթները չեն տարածվում էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների վրա, բացառություն են կազմում հարկադիր աճուրդները:

Վերոնշյալ կարգավորման արդյունքում էլեկտրոնային համակարգերի միջոցով իրականացվող սակարկությունները դուրս են մնացել օրենքի կարգավորման շրջանակից եւ իրավական համակարգում չկա դրանց վերաբերյալ հստակ կարգավորում, արդյունքում նշված ոլորտի օրենսդրական կարգավորումը մնացել է բաց: Ներկա շուկայական հարաբերությունների համատեքստում լայնորեն տարածված են եւ շարունակում են զարգանալ էլեկտրոնային զանազան համակարգերի ներդրումը, որպիսի պայմաններում աշխատանքի եւ գործունեության կազմակերպումը դառնում է ավելի արդյունավետ եւ ժամանակակից՝ տնտեսելով գործարար շրջանառության մասնակիցների ժամանակը եւ ռեսուրսները:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հրապարակային սակարկությունների կազմակերպման գործընթացն համահունչ չէ ներկա հրամայականներին, որի արդյունքում գործնական կիրառության ընթացքում աճուրդի կազմակերպման գործընթացը ենթադրում է ժամանակի եւ ռեսուրսների կորուստ, ավելին՝ աճուրդի մասնակիցների հնարավոր շրջանակը դարձնում է

բավականին նեղ, որը խաթարում է գործարար շրջանառության մասնակիցների իրական շահերը, քանի որ ոչ մեծ շրջանակի է հայտնի լինում աճուրդի վերաբերյալ տեղեկատվությունը եւ աճուրդին մասնակցել ցանկացողներն իրականացնում են մի շարք բարդ գործողությունների համակցություն, որպիսի պայմաններում աճուրդին մասնակցում են հնարավոր մասնակիցների շրջանակից ավելի նեղ շրջանակ, այսինքն աճուրդի հնարավոր մասնակիցների իրական քանակը մնում է չբացահայտված, որը սահմանափակում է նաեւ աճուրդում վաճառվող գույքի գնի ավելի մեծ մրցակցային հնարավորությունները, արդյունքում փոքրանում է գույքի սեփականատիրոջ կամ գույքի սեփականատիրոջ անունից վաճառք իրականացնելու իրավունք ունեցող սուբյեկտների՝ գույքի վաճառքից ստացվող եկամուտը, վերոնշյալ հանգամանքը ֆինանսաբանկային համակարգի տեսանկյունից դիտարկելու դեպքում կարող ենք արձանագրել, որ առաջանում է նաեւ սոցիալական խնդիր, որն ուղղակի կապի մեջ է բնակչության սոցիալական ապահովության եւ ֆինանսական շուկայի կայունության հետ, մասնավորապես այն դեպքերում, երբ ֆինանսաբանկային համակարգի կողմից իրացվում է գրավի առարկա համարվող գույքը, ապա աճուրդի մասնակիցների լայն շրջանակը եւ աճուրդի մասնակցության առավել պարզ մեխանիզմների ներդրումը կխթանի աճուրդում գույքի հնարավոր ամենաբարձր գնով վաճառքը, ինչի արդյունքում գրավով ապահովված պարտավորության մարումը կլինի ավելի մեծ, որը իր հերթին կթեթեւացի վարկառուի վարկային բեռը, ինչու չէ նաեւ հնարավոր է վարկային պարտավորության ամբողջական մարում եւ որոշակի գումարի վերադարձ գրավատուին, որպիսի պայմաններում գործարքի բոլոր մասնակիցների տեսանկյունից կստեղծվի առավել նպաստավոր իրավիճակ, որը ֆինանսաբանկային համակարգի մասնակիցներին կհաղորդի նոր որակ եւ հնարավորություններ՝ միաժամանակ թեթեւացնելով նաեւ բնակչության ֆինանսական բեռը:

Էլեկտրոնային համակարգերի միջոցով սակարկությունների իրականացման ներդրումը հնարավորություն կտա աճուրդների կազմակերպման նոր մոդելի զարգացմանը, ինչը կարծում ենք կնպաստի բիզնեսի մոտ գործարքային ծախսերի կրճատմանը:

Կարգավորման նպատակը եւ բնույթը

Տնտեսվարող սուբյեկտների եւ շահառուների համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ գործարքային ծախսերի կրճատման եւ էլեկտրոնային հարթակների զարգացման տեսանկյունից:

Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունման պայմաններում ակնկալվում է ոլորտի տնտեսվարող սուբյեկտների եւ շահառուների համար մրցակցային պայմանների ապահովում, բիզնեսի ծախսերի նվազեցում, ինչպես նաեւ էլեկտրոնային հասարակության ձեւավորման համար գործիքակազմերի խթանում:

Նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների ու ծախսերի էական ավելացման կամ նվազեցման բացակայության վերաբերյալ

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի ավելացում չի նախատեսվում, միաժամանակ հնարավոր է եկամուտների ավելացում, վարչական ռեսուրսների կրճատում: